



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թիւ 1897  
Նոյեմբեր 6, 1994

Հոգեշնորհ  
Տ. Նարեկ Արդ. Պէրպէրեան  
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցոյ  
Ռիչմընտ.

Սիրելի Հայր Նարեկ,

Ուրախութեամբ կը վկայենք որ կուսակրօն քահանայ ձեր ձեռնադրութենէն ի վեր դուք նուիրումով ընդառաջած էք ձեզի վստահուած հոգեւոր պարտականութիւններուն: Որպէս գնահատութիւն մեր թեմին մէջ ձեր մատուցած հոգեւոր օգտակար ծառայութեանց, ինչպէս նաեւ ձեր խնամքին յանձնուած երիտասարդ եւ տարեց հաւատացեալներու հոգեւոր վերազարթումի ի նպաստ ձեր կատարած արդիւնաւոր գործունէութեան՝ մեզի համար հոգեկան գոհունակութիւն է Վարդապետական շորս աստիճաններ շնորհել ձեզի:

Այս առթիւ ձեզի կու տանք նաեւ Լանջախաչ կրելու իրաւունքը, եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիպումներու ընթացքին:

Մենք յուսով ենք որ, որպէս Հոգեւոր Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցոյ, նոյն եռանդով պիտի շարունակէք ձեր ստանձնած առաքելութիւնը եւ ձեր կարողութիւնները ի սպաս պիտի դնէք մեր եկեղեցոյ պայծառութեան եւ հաւատացեալներու բարօրութեան համար:

Կ'աղօթենք որ Սուրբ Հոգին առաջնորդ հանդիսանայ ձեզի:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ